ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Գրիգորյանը, Վանո Հակոբյանը, Հայկ Մարիկյանը, Արմեն Ջուլիակյանը, Մարտուն Մարտիրոսյանը,

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Արսեն Հարությունյան, Լուսինե Հովհաննիսյան, Գագիկ Շիրմազանյան, Գայանե Ղալաչյան, Լևոն Քալանթարյան, Անուշ Կիրակոսյան, Սամվել Անտոնյան, Գևորգ Մանուկյան, Էլմիրա Ռևազյան, Գրիգոր Պապյան, Մարիամ Մանուկյան, Արման Սուքիասյան, Լյուդմիլա Էլոյան, Արփիկ Առաքելյան, Լիլիթ Գրիգորյան, Նարինե Ղարաքեշիշյան, Արարատ Չերքեզյան, Արտակ Սաքանյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Գրիգորյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին **որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 67-Ա)*

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԼԵՎՈՆ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 689-րդ հոդվածով, հաշվի առնելով Ստեփանավան համայնքի ղեկավարի առաջարկությունը Ստեփանավան համայնքի ավագանին. ***որոշում է***

Բնական գազի անխափան մատակարարման, գազահամակարգերի սպասարման և անվտանգ շահագործման նպատակով՝ տալ համաձայնություն գույքի անհատույց օգտագործման իրավունքով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելու ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Ստեփանավան, Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր բնակավայրերում 2024 թվականին սուբվենցիոն ծրագրով կառուցված և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ներքոհիշյալ վկայականներում նշված գույքը.

Հ/Հ	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի տրման ամսաթիվը	Գույքի գտնվելու վայրը և անվանումը	Հողամասի բնութագրերը/ կադաստրային ծածկագիր, մակերեսի չափ՝հա, նպատակային նշանակություն, գործառնական նշանակություն/	Լրացուցիչ տեղեկություններ
1	30062025-06-0047	27.06.2025	Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, գյուղ Ուրասար, 3-րդ փողոց 25/3	06-106-0021-0033, 0,00119 հա, բնակավայրերի՝ այլ հողեր	Թիվ 1և2 շինությունների ընդհանուր մակերեսը կազմում է 3.7 քմ

			շինություն		
2	31072025-06-0044	31.07.2025	Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, գյուղ Արմանիս, 3-րդ փողոց 1/1	06-007-0722-0021, 0,00065 հա, բնակավայրերի՝ այլ հողեր	Հողամասում առկա է 1.5 քմ ՊԳԿԿ և 0.7 քմ հաշվիչ հանգույց
3	02082025-06-0013	02.08.2025	Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, գյուղ Կաթնաղբյուր, 4-րդ փողոց, 3/1 հողամաս	06-051-0035-0011, 0,00124 հա, բնակավայրերի՝ այլ հողեր	Հողամասում առկա է 2,8 քմ ՊԳԿԿ և 0.70 քմ հաշվիչ հանգույց

1. Թույլատրել Ստեփանավան համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ հետ կնքել վերոհիշյալ վկայականներում նշված անշարժ գույքերի անհատույց օգտագործման պայմանագրեր՝ իրականացնելով նաև դրանց առնչվող անհրաժեշտ փաստաթղթերի ստորագրման, դրանցից բխող գործողությունների (այդ թվում՝ նոտարական վավերացման) կազմակերպման և պատշաճ իրականացման գործընթացը:

2. Սույն որոշմամբ թույլատրել վերոնշյալ անշարժ գույքերն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել (գույքի անհատույց օգտագործման պայմանագրերը կնքել) 10 (տաս) տարի ժամկետով՝ յուրաքանչյուր պայմանագրում սահմանելով, որ եթե կողմերից որևէ մեկը պայմանագրի ժամկետի գործողության ավարտից 1 (մեկ) ամիս առաջ չի ծանուցում մյուս կողմին պայմանագիրը լուծելու կամ նոր պայմանագիր կնքելու մասին, ապա պայմանագիրը համարվում է երկարաձգված անորոշ ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ- 16ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 68-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ , ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումով, հիմք ընդունելով «ԳԵՈԿԱԴ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը, Ստեփանավան համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Ստեփանավան համայնքի վարչական սահմաններում գտնվող Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 06-007-0273-0001 կադաստրային ծածկագրի 2.28181 հա անտառային նպատակային նշանակության անտառ գործառնական նշանակության, 06-007-0267-0001 կադաստրային ծածկագրից 4.44539 հա անտառային նպատակային նշանակության անտառ գործառնական նշանակության, 06-007-0058-0025 կադաստրային ծածկագրի 0.29646 հա անտառային նպատակային նշանակության անտառ գործառնական նշանակության հողամասերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերասեսչական հանձնաժողովի քննարկմանը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 69-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ ԱՐՍԵՆ ՄԱՄԱՋԱՆՅԱՆԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՁԵԿ. ԳԱՅԱՆԵ ՂԱԼԱՉՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարին է դիմել Ստեփանավան քաղաքի Բաղրամյան փողոց թիվ 103/24 հասցեի բնակիչ Արման Նավասարդյանը (վերջինիս երկրորդ խմբի հաշմանդամ է,) հայտնելով, որ 2025 թվականի հուլիսի 17-ին մայրը՝ Լավուրիկ Նավասարդյանը մահացել է և հուղարկավորության համար գումար չունենալու պատճառով գտնվում է Ստեփանավանի «Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում: Մորը՝ Լավուրիկ Նավասարդյանին հուղարկավորելու համար խնդրում է համայնքապետարանի դրամական աջակցությունը: Հաշվի առնելով տվյալ հանգամանքը, Ստեփանավանի համայնքապետարանը դիմել է սգո ծառայություններ մատուցող Ա/Ձ Արսեն Մամաջանյանին, որն էլ իրականացրել է հուղարկավորության արարողությունները 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ կետով մատուցած ծառայության դիմաց, Ստեփանավան համայնքի ավագանին. **որոշում է**

1. Մատուցած ծառայության դիմաց Ա/Ձ Արսեն Մամաջանյանին տրամադրել 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 70-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՎԱՐՍԻԿ ԱՍՐՅԱՆ

ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՏՈՄ ԳԱԳԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆ

ԱՆՈՒՇ ԻՍՊԻՐՅԱՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼԻԼԻԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՂՈՒՆԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՊԱՊՅԱՆ

ԼԵՎՈՆ ՊԱՊՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏՈՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Հասմիկ Մովսիսյանը